

եղած պահանջներին ըստականութիւն զանե-  
լու համար՝ պէտք է համապատասխան մար-  
դիկ կրթել հոգեւոր կրթարաններում:

Մեր հոգեւոր կրթարանները մինչեւ  
այժմ՝ ցանկալի մարդիկ չեն տուել նորա հա-  
մար: որ հոգեւոր կրթութիւնը խիստ պակաս  
է եղել նոցա մէջ՝ պակաս է եղել Քրիստոսի  
հոգին: Այն յեղափոխութիւնը, որ մեր դա-  
րում՝ սկսուել է հայ ժողովրդի կեանքի մէջ՝  
աշխարհական կրթութեամբ է սկսուել: եւ ե-  
կեղեցին անկարող լինելով իւր միջից նոր  
կեանքի պահանջների համաձայն հոգեւոր  
կրթութիւն արտադրելու՝ թոյլ է տուել, որ  
հայ անուն կրող եւ հոգեւորականներ պատ-  
րաստելու կոչուած դպրոցներում՝ աշխարհա-  
կան կրթութիւն իշխէ: Իսկ այսպիսի կրթու-  
թեամբ սնուած հրապարակախօսներ եկեղեց-  
ւոյ գործունէութիւնը քննադատելով՝ չեն կա-  
մեցել եւ չեն կամենում՝ նաեւ այժմ հասկա-  
նալ, թէ կորեկ ցանած տեղում՝ ցորեն հնծել  
չի կարելի: չեն կամենում՝ հասկանալ մա-  
նաւանդ, որ հայ կրթութիւն պահանջել  
կրթութեան համար դուռ բանալ չի  
նշանակում: եւ մինչեւ հոգեւոր սնունդ չլինի՝  
մշմարիտ հոգեւորական չի զարգանայ, Երբ  
այս մասին խօսք է լինում: հանդէս են գալիս  
միշտ այն անտեղի առարկութիւնները՝ ժողո-  
վրդի մէջ ապրելու, ժողովրդին օգտակար ար-  
հեստներ սովորելու, ժողովրդի կեանքը ուսում-  
նասիրելու մասին: որոնք կարելի է ասել ընդ-  
հանուր առմամբ այն անհեթեթ միտքն են ար-  
տայայտում, թէ որովհետեւ ժողովրդին աշ-  
խարհական է, նորա հովիւն էլ աշխարհական  
պէտք է լինի: կարծես ներքին հոգեւոր ուղղու-  
թիւնը արգելք է լինում: եւ չի նպաստում ընդ-  
հակառակն: ժողովրդին մօտենալու: կարծես  
Մայր Աթոռից սկսած ըստ մեր եկեղեցական  
հաստատութիւնների մէջ սնուող եւ պաշտօն  
վարող ժողովրդի զաւակն աւելի միջոց չունի  
իւր ժողովրդի ցաւերը տեսնելու եւ իսկական  
կարիքների համար հոգ տանելու: քան որ եւ  
հեռու օտար քաղաքում ուսանողը, գրասեղա-  
նի մօտ կամ մի մութ նկուղում՝ գինու քաժակն  
առաջին ազգային խնդիրները լուծողը, կամ  
Բագուի նաւթահորերում՝ աշխատողը, Պէտք  
է վերջապէս թողնել այս մոլորութիւնները եւ

լրջութեամբ հետամուտ լինել մեր առաջ  
գծած ուղիղ ճանապարհով հարցը լուծելու:  
Եթէ մշմարիտ իսկ լինէր, թէ ժողովրդի մէջ  
ապրող պատահական մարդկանցից սպասելու  
է ժողովրդին օգտակար հոգեւորականներ՝  
փորձը ցոյց է տալիս, որ մինչեւ այժմ՝ զուր  
ենք սպասել այդպիսիներին: Մնում է կրկին  
հոգեւոր դպրոցներում՝ հոգեւորականներ պատ-  
րաստել, իսկ դորա համար ամէն ջանք պէտք  
է գործ դնել: ամէն միջոց ձեռք առնել, որ  
հոգի լինի այլ դպրոցներում: Քրիստոսի հո-  
գին, քարոյական կրթութիւն եւ քեղուն քաղ-  
մարդկանդակ ուսում: որ նորա ներքուստ եւ  
արտաքուստ քարեկարգ եւ անկարօտ վիճակի  
մէջ լինին:

Արարատի անցեալ համարում տը-  
պուած Վեհափառ Հայրապետի սրբատառ  
Կոնդակը ուշադրութիւն է հրաւիրում այս  
մտքով աւագագոյն հոգեւոր դպրոցի մեր  
Բնիկ Երանգոյն հայ Կրթութիւն վերայ:  
Թող զօրանայ եւ աճի այդ ուշադրութիւնը  
մեր ժողովրդի մէջ, թող քարգաւաճին ճեմա-  
րանն ու դպրանոցները եւ միջոց ունենան ըստ  
կարելոյն մեծ թուով՝ հոգեւորն քարոզիչներ:  
ուսուցիչներ, արթուն հովիւներ եւ դաստիա-  
րակներ, զրնով ու խօսքով մշմարտութեան  
աւետարանն ու մշմարիտ լուսաւորութիւն տա-  
րածող արժանաւոր հոգեւորականներ սնու-  
ցանել:— այն ժամանակ շատ հարցեր մի  
անգամից լուծուած կլինին, կգտնուին նաեւ  
մարդիկ, որոնք կենդանի օրինակով կրկերա-  
կենդանացնեն հաւատը մեր ժողովրդի մէջ:

## ՄԱՅՐ ԱԹՈՐ.

† Թագաժառանգ Նորին Կայսերական  
Բարձրութիւն Գեորգի Ազգայնապետի մա-  
հուան գոյժը Մայր Աթոռ հասաւ հինգշաբ-  
թի, յուլիս մէկին, և իսկոյն Մայր տաճարի  
զանգակները տխուր հնչմամբ հրաւիրեցին  
Միաբանութեան և աղօթաւոր հասարակու-  
թեան մասնակցելու ամբողջ Ռուսաստանի

սգոյն և Արքայազն Հանգուցեալի հոգւոյ համար աղօթելու: Հոգեհանգստեան կարգը կատարուեցաւ Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ: որ շտապեց իւր վշտակցութիւնը յայտնել Նոյնի կայսերական Մեծութեանց՝ Թագաւոր կայսեր և Մայր կայսրուհւոյն և ի պատասխանի ստացաւ հետեւեալ հեռագիրները:

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻՑ:

Խորապէս զգացուած եմ Ձերդ Որբութեան ջերմագին աղօթքներով վաղաժամ վախճանուած Թագաժառանգի հոգւոյ հանգուցման համար: Ի սրտէ շնորհակալ եմ Ձեզնից և բոլոր Հայոց եկեղեցուց՝ արտայայտած վշտակցական զգացմանց համար:

ՆՌԿՈՒԱՅ:

ՄԱՅՐ ԿԱՅՍՐՈՒՀՈՒՅ:

Խորապէս զգացուած եմ Ձեր կարեկցութեամբ և աղօթքներով անկեղծօրէն շնորհակալ եմ:

ՄԱՐԻԱ:

Վեհափառ Հայրապետի կողմից ուղղուած հեռագիրն էր:

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ:

Թագաժառանգ Գեորգիյի մահուան խիստ վշտալի գոյժը յանչափս տխրեցրեց ինձ և ամբողջ Հայոց եկեղեցին: Խոնարհելով Լմենաբարձրեալի անփոփոխելի նախասահմանութեան առաջի դառնապէս ողբում ենք հարիւր միլիոնաւոր հաւատարիմ հպատակների հետ այդ մեծագոյն կորուստը և Միաձնի սեղանի առաջ հոգեհանգիստ կատարելով՝ ամենաջերմեռանգն աղօթքներ ենք վեր առաքում՝ տալ Ձերդ Մեծութեան և Հոգւոյ մխիթարութիւնը, թեթեւացնելով Ձեր

մեծ վիշտը: Եւ թող Լմենոյորմաճն Լստուած հանգուցանէ Գեորգիյ Թագաժառանգի հոգին, յախտեանական կեանք պարգեւելով երկնից արքայութեան մէջ:

Նոյն բովանդակութեամբ՝ Մայր կայսրուհւոյն:

ՎԵՅ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂՆԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Յունիսի 3-ին Նորին Սրբութիւնը բարեհաճեց այցելել մի քանի վանքերի, և Մոզնի, Սաղմոսականք հանգիպելով՝ այցելեց հիւանդ Գեր. Սարգիս արքեպիսկոպոսին իւր հայրենի Ղարաբուլաղ գիւղում: եղաւ Սեանում գիտեց հաղարծնի վանքը, և Ղարաբլիսայի Ապարանի վերայով վերադարձաւ և Աթոռ յունիս 12-ին: Նորին Վեհափառութեան ուղեկցում էին Բարձր. Գարեգին վարդ. Սաթուհեան և կալուածոց կառավարիչ պ. Աւետիս Տէր Գարրիէլեան:

Հոգեւոր Տէրը, երբ անցեալ տարի Լուսաւորչի Մուան ի վերապն տօնին իւր ներկայութեամբ պատուեց Ճեմարանում այդ աթիւ կատարած հանգեւոր ծառի մէջ ի միջի այլոց ցանկութիւն յայտնեց միանգամ էլ յոր վերապում կատարել և Լուսաւորչի յիշատակը, որ և ի կատար ածել հաճեցաւ այս տարի Լուսաւորչի Նին ի վերապն տօնի օրը: Երեքշաբթի երեկոցեան՝ յունիսի 15-ին Վեհափառ Հայրապետը Երեւան ուղեւորուեցաւ: չորեքշաբթի այնտեղ մնալով ինչ ինչ գործերի համար, ի միջի այլոց, տնօրինեց նուէրներ գնել իւր կողմից յոր—վերապն վանքի համար: Հինգշաբթի յունիսի 17-ին՝ առաւօտեան՝ հայրապետական կառքը շրջապատուած ձիաւորներով և շքախմբի կառքերով՝ ծանապարհ ընկաւ դէպի Սոր: վերապն Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գեր. Տ. Ներսէս Նրեանի թեմակալի փոխանորդը՝ գաւազանակիր Տ. Կորիւն վարդապետ, Տ. Գարեգին վարդ. Յովսէփեան, երկու սարկաւաղներ և Ըջմիաճնից, բազմաթիւ քահանաներ Երեւանից և ծանապարհի վերայ եղած զիւղերից: Նո-

րադուխթ գիւղում հասարակութիւնն իւր քահանաներով աղ ու հաց մատոյց Սորին վեհափառութեանն որ հաճեց կառքից ցած իջնել և եկեղեցին այցիլել: Գերապատիւ Տ. Երևան արքեպիսկոպոսը հարկաւոր աեղեկութիւններ էր հաղորդում եկեղեցու և համայնքի մասին:

Սարգստութիւն մինչև Բեկջղաղլու գիւղը ուր Սորին Ս. Օծութիւնը գործակալ Տ. Գրիգորի տանը գիշերել հաճեցաւ: Ծանապարհի երկարութեամբ հայ հասարակութիւնները ներկայանում էին քահանայական դասով և աղ ու հաց մատուցանում: Գիւղերից բազմութիւն ձիաւորներ հետգհեաւ միանում էին Հայրապետական շքախմբին և առաւ քաղմութիւն կազմում: Այդ օրը հայ գիւղացիների համար կատարեալ աօն էր. ամեն կողմից կեցեցներ. ուրախութեան աղաղակներ էին լսում Հայրապետի օրհնարի զայտեան առթիւ: Վերջին ժամուայ ծանապարհորդութիւնն արդէն աւելի թափոր էր քան ուղեգնացութիւն: Ծանապարհի երկարութեամբ համարեա անընդհատ գիւղացիները, արք և կանայք, երեխաներ և ծերունիներ ուսնում ոստերով ընդառաջել էին Հայրապետին՝ Սորա օրհնութիւնն ստանալու: Ամէն աեղ ուր կանգնած էին հասարակութեան ներկայացուցիչները, աղուհացով և քահանայական դասով կանգնում էր Հայրապետական կառքը: Հոգեոր Տէրը աղ ու հաց ընդունելուց յետոյ օրհնում էր ժողովուրդին և զեռ կեցեցների ձայնը հոռեից չգաղարած՝ առջևից էր լսում աւելի ուժգին:

Թափորը շատ աւելի կենդանութիւն ստացաւ Ղամարլուից Բեկջղաղլու գիւղն անցնելիս: Զիաւորները ուրախութեան աղաղակներով ձիաւորաւ էին խաղում: Հարիւրաւոր մանուկներ ուսնում ոստերով ընդառաջել էին կառքին: Բեկջղաղլու և չրջակայ գիւղերի հասարակութիւնները շարուած էին ծանապարհի և փողոցների երկարութեամբ և ողջունում էին իրենց Հոգեոր Պետին: Սորին Սրբութիւնը ծաշելուց և հանգստանալուց յետոյ հաճեցաւ եկեղեցի իջնել և համաօթ քարոզով մխիթարել ժողովրդեան:

Հեռեւեալ օրը նոյն շքեղութեամբ Սրբազ-

նադոյն Հայրապետը Սոր-Վիրապ հասաւ: Չրջակայ գիւղերից Սոր-Վիրապ էր հաւաքուել այդ ժամանակի համար աներևակայելի մեծ թաղմութիւն: Այս անգամ ժողովուրդը ուխտ էր եկել ոչ միայն Լուսաւորչի կենդանի նահատակութեան վայրը համբուրելու, այլ և նորա արժանընտիր յաջորդի օրհնութիւնն ստանալու: Ժողովուրդն ի սրտէ ուրախանում էր իւր Հայրապետի ներկայութեամբ ամեն կողմից ուրախութեան ձայներ և երգեր էին լսում մեծ մասով Հայրապետի անունն նուիրուած: Եարաթ և կիրակի օրերը հանդիսաւոր պատարագ կար ժողովուրդի խոնոեւլու պատճառով վեհ Հայրապետը քարոզ խօսել և ժողովուրդին մխիթարել չխարոյացաւ: Բայց կենդանի քարոզ և մխիթարութիւն էր Սորա ներկայութիւնը:

Կիրակի երեկոյեան Ղամարլուի հասարակութեան պառագամաւորների խնդրանաց համեմատ՝ Հոգեոր Տէրը հաճեցաւ ընդունել հասարակութեան պատարաստած ընթրիքը և այնտեղ գիշերել: Հատարակութիւնն ընդունեց իւր բարձր Հիւրին մեծ ոգեւորութեամբ: Հիւրընկալող տան պարտեղը զարդարուած էր լապտերներով: Ընթրիքի սկզբին ներկայ էր Հայրապետը, որ սեղանն օրհնելուց և Ղամարլուի հասարակութեան կենացն առաջարկելուց յետոյ հեռացաւ հանգստանալու: Ընթրիքը շարունակուեցաւ մինչև կէս գիշեր: Հայրապետական շքախմբի անդամների ներկայութեամբ, թաղմութիւն ծառի խօսուեցան շքախմբի անդամների և հասարակութեան ներկայացուցիչների կողմից:

Հեռեւեալ օրը, յունիսի 21-ին Սորին վեհափառութիւնը հաճեցաւ ծաշ վայելել Սորագաւթում: Տ. Գեորգ քահանայի տանը և ապա մի քանի ժամ Դրեանում հանգրստանալուց յետոյ՝ վերադարձաւ Դուր Աթոռը:

Այնուհետև Սորին սրբութիւնն մի անգամ ևս այցելեց Սաղմոսավանք, Բարձր Ղևոնդ և Գարեգին Սալոնեան վարդապետների ուղեկցութեամբ, և գիշերեց Բիւրականում: Ապա յուլիս 4-ին մի քանի օր հանգրստանալու համար կրկին Բիւրական գնաց, հետն առնելով զիւանապետ Արթ. Կորիւն վարդապետին և 8-ին Սաղմոսավանք հան-

գիպելով և Օշականում զիշերելով յաջորդ առաւօտը վաղ Մայր Աթոռ վերադարձաւ քաջառողջ։

Յունիս ամսուայ ընթացքում արձակուրդ են ստացել և ամառանոցներում իրենց առողջութիւնը կազդուրելու համար մեկնել են Մայր Աթոռի միաբաններին՝

Գեր. Սուքիաս արքեպիսկոպոս՝ Ղարաբիխայ որտեղից Վեհափառ Հայրապետի բարեհաճ համ կարգադրութեամբ Մարցոյ կալուածները պիտ երթայ առ տեղեան քննութիւն կատարելու և Եօրիս վեհափառութեան տեղեկութիւն հաղորդելու համար։

Գեր. Մակար եպիսկոպոս՝ Դիլիջան որի փոխարէն առ ժամանակ լուսարարապետութեան պաշտօն է կատարում Դեր. Դրիգոր եպիսկոպոս Գառնակերեան։

Գեր. Անանիա եպիսկոպոս և Արժ. Յովհաննէս վարդ. Դպիր-Վարդանեան՝ Տփլիս։

և Ենորհ. դպիր Գալուստ Տ. Մկրտչեան՝ Աղէքսանդրապոլ։

Այլ և տղարանի գործերով Տփլիս է գնացել տղ. վարչութեան անդամ Ենորհ. Ղազար սարկաւազ, և զէպի Աղէքսանդրապոլ։ Կարս Ենորհ. Հմայեակ սարկաւազ։

Արժ. Եղիա վարդապետ Հոսան. Զաւալեան ս. Սինդի որոշմամբ երկու շաբաթ շրջից Արարանի գիւղերում եկեղեցիների վիճակագրութիւն կազմելու համար և Մայր Աթոռ վերադարձաւ։

Մայր Աթոռ վերադարձան

Յունիս 3-ին Ծեմարանի տեսչի օգնական և Արարատի խմբագիր Կարապետ վարդապետ։

Յունիս 10-ին Արժ. Արսէն վարդ. Ղաթնեան որ վերջին տարիներս ուսանում էր Մոսկուայի համալսարանում։

և յունիս 8-ին նոյն համալսարանում ուսանող Բարեչն. Բազարատ արեղայ վարդապետեան։

Մայիս 29-ին ս. Գայիանէի վանքում Գեր. Անանիա եպիսկոպոս սարկաւազութեան աստիճան տուաւ Մայր տաճարի կրտսեր լուսարար Վահան Լազարեանցին, որ և զրուեցաւ ս. Էջմիածնի միաբան։

Ս. Էջմիածնի տօնը կատարուեցաւ սո-

վորական շքով։ Պատարագին էր Դեր. Դրիգոր եպիսկոպոս, պատարագից առաջ հայրապետական մաղթանք ասուեցաւ Ուխտաւորների բազմութիւնն այս տարի համեմատաբար աւելի մեծ էր, Ծաշին վանքի սեղանատան մեծ հացկերոյթ կար. հրաւիրուած էին բազմաթիւ հիւրեր։ Մօսկոյ և ս. Էջմիածնի հաստատութեան բաժակ առաջարկեց Կարապետ վարդապետ։ Ապա Վեհափառ Հայրապետի Միաբանութեան և Ազգի կենաց բաժակներ առաջարկեց Տեղապահ Դեր. Արիստակէս արքեպիսկոպոս։ Երեկոյեան պայծառ կերպով լուսաւորուած էին Մայր տաճարի բակն ու Ծեմարանը։ Եսա մէկ և ապա միւս տեղում երգեց Ծեմարանի երգեցիկ խումբը՝ ի զուարճութիւն զրօնող հասարակութեան։

Յունիս 8-ին ս. Սահակի և Մեսրոպի տօնը այս տարի ևս Օշականում կատարուեցաւ։ Պատարագիչ էր Բարեչնորհ Եղիշէ արեղայ Ահարօնեան և ներկայ էին Ծեմարանի տեսուչն ու աշակերտները։ Վեհափառ Հայրապետի ցանկութիւնն էր նոյնպէս Դեր. ներկայութեամբ պատուել այդ օրուայ հանգէսը, բայց սաստիկ շոգի պատճառաւ ստիպուած եղաւ ցերեկը Սաղմոսավանքում անցնել և երեկոյեան միայն Օշական գնալ։ Ուխտաւորների բազմութիւնը Վաղարշապատից Աշտարակից և ուրիշ շրջակայ գիւղերից այս տարի համեմատաբար շատ աւելի էր քան նախնիքից տարիներ։—Այսպիսով Վեհափառ Հայրապետի կողմից եղած քաջալերութիւնն ու Ծեմարանի տուած օրինակը բարերար ազդեցութիւն են ունեցել՝ ս. Մեսրոպի ուխտի նշանակութիւնը գնալով մեծանում և ընդհանրանում է շրջակայ ժողովրդի մէջ, ինչպէս և նկատեց Կարապետ վարդապետ, պատարագից յետոյ խաչահանգստեան միջոցին մի քանի խօսք ուղղելով ներկայ ժողովրդեան։—Վանքապատեան ծառաստանում ճաշ էր պատրաստած Ծեմարանի աշակերտների համար, որին մասնակցեցին Հ. Եղիշէն, ս. Էջմիածնից եկած ստրկաւազներ և հիւրեր, մի քանի տեղական քահանաներ։ Վեհափառ Հայրապետի և այլ կենացների խմուեցան ու ազգերգեր երգուեցան։